# ՀԱՆԴԷՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

## «ԻՆՖԼԷՔՍԻՊԼ»

### ԱՆԳՂԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՆԱՒՆ

*Քանի մը տարի առաջ Լոնտրայի օրագրի մը թղթակիցն ուզելով նկուղն աշտարակաւոր նաւուն արտաքին տեսիլը նկարագրել, ըսաւ՝ թէ ընդ մէջ խոհանոցի հանդերձանքի և երկաթուղւոյ կայարանի մը բան մ'է։*

*Ինֆլէքսիպլ նաւը իր ամբողջութեան մէջ նկարագրելն՝ յիրաւի վարանելու նիւթ է։ Իր կազմածոյն նկատմամբ, առանց առաջակողման կայմի՝ պիկք մ'է. տարածութեան նկատմամբ, անհագին գօտւով* (traverse) *մը շոգեշարժ երկայն ֆրէկատ մ'է. ուրիշ կերպով կրնայ սահմանուիլ՝ բաղկացութիւն մը, բովանդակութիւն մը չնչելոյզ խողովակաց, շոգւոյ ագուգայից, մեքենայից, կաթսայից, ելեկտրական գործեաց, և այլն, Նորտէնֆելտսի փոքր և ստուար թնդանօթից, միով բանիւ ծովամարտ պատերազմին մէջ գործածուած վերջին ամենայն գործիներով։ Ինչպէս Կլէւպատրա նաւուն, կրնայ ըսուիլ իրեն համար ալ՝ որ անցանէ զանցանէ քան զբնաւ նկարագրութիւնս։*



Իտալական նաւն «Տուիլիոյ».

*Ի նաւակէն՝ սանդղով* (companion-ladder) *ելլելով նաւուն յարկին վրայ, գրեթէ 6 հարիւրորդամեդր և կէս հաստութեամբ երկաթէ տախտակաց վրայ կը գտնուինք, և առջևնիս կ'ելլէ աշտարակաց դիմաց դրուած տախտակքն իրենց ութանից 6 թնդանօթներով, որոց բերաններն այնչափ լայն են՝ որ տասնամեայ տղայ մը խիստ աղէկ կրնայ անցնիլ։*

*Զարմանալի է այն դիւրութիւնն՝ որով այս տարապայման զանգուածներն կը շարժին, թէ որ մտածուի՝ որ ամենայն աշտարակ իրեն միջի պարունա-*



digitised by A.R.A.R.@

կածոցին 650 տակառաչափ կը կշռէ: Աշտարակաց միջնորմունքն ձևացած են 24 հարիւրորդամեդր հաստութեամբ ողորկեալ երկաթէ առաջին պատեանով մը, 22 հարիւրորդամեդր դէք փայտէ հաստարանով մը, ապա ուրիշ երկաթէ տախտակ մը 22 հարմ., յետոյ ուրիշ դէքէ հաստարան մը, և 'ի վերջոյ երկաթէ տախտակ մը 4 հարմ., որ կը պատէ ներքին կողմը:

Թնդանօթը արձըկելու ժամանակ, իւրաքանչիւր աշտարակաց մէջ բաց 'ի



Անգղիական նաւն «Ինֆլէքսիպլ».

Կը տեսնուի գործին ծովասուզիչը նետելու համար. միւսը ջրոյն տակ և ընկղմեալ ծովասուզիչները կողէն նետուած:

սպասյից՝ հինգ մարդ կը գտնուին, երկու մարդ միջնորմոյն կողմանէ թնդանօթոց քով կը կենան և այլք յատակը: Ցետոյ երբ կը լեցընեն, կը դարձունեն աշտարակը ինչուան որ պատուհանին կամ՝ դնդնկէցաց որմածերպին ստորին մասն՝ յարկին կլասիսի տախտակաց տակ ծածկուած միայ, թնդանօթին բերանն կը խոնարհի, և յարկին տակ ծակէ մը դուրս կ'ելնէ: Պզտի գործի մը մտա կը

digitised by A.R.A.R.@

տանի երկաթէ ատամնորդներ, վառօ-դը և դնտակը (Ա) մթերանոցին ին-չուան կէտ մ'անմիջապէս թնդանօթին (Բ) բերանին տակն և գլխոյը: Արդ ուրիշ բան չի մնար ընելու՝ բայց նետել լցուցածը, և այս գործն կ'ըլլուի գաւա-



Աշտարակին ներսն. ութսունոց թնդանօթն պատրաստ 'ի պատուհանն դրուելու:

ղանիկի մը միջոցով, որ շոգւոյ զօրու-թեամբ կը շարժի: Աշտարակը, մեքե-նայք և այն մասերն զորս կ'ուզեն պաշտ-պանել, միջնաբերդ կոչուածին մէջ կը

digitised by A.R.A.R.@

կենան, որ ուղղանկիւնի փակուած միջոց մ'է, 110 ոտք երկայն, 75 լայն, որոյ կողերն 48 հարմ. հաստութեամբ երկաթէ տախտակօք պատած է, և ինչուան հիմայ հնարուած հզօրեղագոյն զինուց դէմ դնելու ապահով կը համարուին։

Ինչպէս արդէն ըսինք, միջնաբերդին յարկն 6 հարմ. հաստութիւն մ'ունի, մինչդեռ ուրիշ կողմերն նոյն երեսին վրայ միայն մէկ հարիւրորդամեդր կը չափեն։ Պատերազմի ժամանակ, նաւապետն և ուրիշ սպայ մ'ամենէն յառաջակարգ աշտարակին մէջ կը կենան, կանգուն 'ի վերնագոյն մասին. կայ հօն արմըր գրուան (խաչ սպառազինութեան), որ 24 հարիւրորդամեդր հաստ երկաթէ երկու տախտակներով շինուած է, որ հաւասար անկեամբք զիրար կը կտրեն. երկայնագոյնն 10 ոտք է և առ 'ի չեղ նաւուն դրուած է։ Խաչը ձևացընող չորս անկեանց թէ այս թէ այն կողմերը նաւապետն կը գըտնուի, և որ կարևորագոյնն է, հոնկէ նաւը կրնայ ուղղել, աշտարակը դարձունել, ստուար թնդանօթքը պարպել, ընկղմեալ ծովառումբքը արձըկել կամ պզտիանիւ մը դարձունելով կամ պարզապէս ելեկտրական կոճակի մը դպչելով. ուրիշ կողմանէ, կրնայ հաղորդակցութիւն ընել իր սպայից հետ նաւուն որ և իցէ ստորակայ կողմն, ձայնական խողովակաց մէջէն խօսելով։

Խաչին ամէն անկիւնը գործիներն նոյն են. և անոր համար եթէ նաւապետն թշնամեաց հրոյն դիմաց գըտնուի, կրնայ ուրիշ անկիւն մ'երթալ. կրնայ նկատել հորիզոնը՝ աչքին հորիզոնական գիծքով բացուած փոքր ծակուց միջոցով։

Դառնալով աշտարակին յարկին վըրայ և երկաթէ սանդուղներէ իջնելով 'ի վայր, մեքենայից վառարանին տակի խորշը կ'երթաս։ Այս տեղւոյն մէջ գրեթէ անհնարին է կենալ, եթէ ջըրհանք անդադար բարձրէն կարևոր քանակութեամբ օդը չմղեն։

Հօս ածխոյ սպառումն ամենամեծ է, և թէ որ նաւը բռնադատեալ ըլլայ, կամ ուրիշ բացատրութեամբ, պէտք ըլլայ երթալ ամենայն արագութեամբ, վեց օրուան մէջ կը սպառէ բոլոր իր կիզանիւթը (1200 տակառաչափ), զոր եթէ խնայութեամբ գործածէ, եօթնևտասն օրէն աւելի կը բաւէ։ Շատ համարումն չկայ Ինֆլէքսիպլի արագագնաց զօրութեան վրայ, և տարակուսական է, թէ արդեօք լի առագաստիւք երթալու ըլլայ, եթէ հողմ չի փչէ՝ կըրնա՞յ ամենալաւ կերպով յաջողիլ։ Պատերազմի ժամանակ բաց 'ի կարճերէն՝ մէկալ ուրիշ կայմքն և անոր կազմածքն կը հանուին, թողլով որ նաւն միայն իր մեքենայիւքն գործէ, և թէ որ թշնամեաց ձեռքն իյնալու վտանգի մէջ գըտնուի, բոլոր դռնակները և արգելիչ ջրոյ (watertight) ըսուած խորշից դռները բանալով, յորոց վերջիններն 485 հատ են, 18 վայրկենի մէջ կարելի է ընկղմել զնաւը, և բանալով նաև ծովառմբոց ծակերն 'ի յարկին 14 վայրկենի մէջ։

Ջրհանաց զօրութիւնն ամենամեծ է, և թէ որ շոգւոյ զօրութեան վրայ աւելցընես ձեռնական զօրութիւնը, կարելի է նաւէն դուրս նետել ժամուան մէջ 5000 տակառաչափ ջրոյ։ Ինֆլէքսիպլի կմախն և Տանտոլոյ և Տուիլլիոյ իտալական նաւուց կմախներն գրեթէ նըմանք են, այլ վերջին երկուքն կայմ չունին, և Ինֆլէքսիպլէն 800 տակառաչափ նուազ կը կշռեն, որուն ծանրութիւնն 11,400 տակառաչափ է։ Իտալական երկու նաւերն հարիւրի թընդանօթներ կը կրեն, այլ իրենց աշտարակքն աւելի տկար կը համարուին, մի միայն փայտէ հաստարանով թիթեղէ մը շինուած ըլլալով, փոխանակ զի անգղիականքն բաղադրեալ թիթեղներով են։

Բոլոր Ինֆլէքսիպլի սպառազինութիւնն միայն յարկին վրայ չի գտնուիր, վասն զի այտին վրայ (ընդ մէջ առաջակողման կայմին և նաւուն գլխոյն անւոյն բռնած տեղն) ջրոյն տակը պողպատէ ահագին առաջակողմն կայ, և

digitised by A.R.A.R.@

ի բոլքանչիւր կողմէն, ջրոյն մակերևութէն տասն ոտք վար, ծովառումբի ծակ մը կայ, ուստի կրնայ նետուիլ whitehead մը։ Սենեակն՝ յորում կը պահեն և կ'արձըկեն այս ծովառումբքս, երկուստուար խողովակներ կամ գլաններ կը պարունակէ, որոց ծայրն կը բացուի։ Ծովառումբն գլանին մէջ կը դրուի, յետոյ անոր մուտքը կը փակեն, և շնչելոյղ խողովակ մը, ունենալով մէջը մըխոյի գաւազան մը, անոր հետ 'ի յարաբերութեան դրուած է, և զծովառումբը կընետէ անհուն արագութեամբ մը ջրոյն մէջէն՝ զանազան խողովակաց մէջ ներփակեալ ճնշեալ օդոյ միջոցով։

Վարի խորշերն ձէթի կանթեղով կամ ելեկտրական ճրագներով լուսաւորեալ են, մեծագոյն մասն Պրիւսհի դրութեամբ և ոմանք Կրամի։

Նաւապետին սենեակն նաւուն խելաց բարձրագոյն կողմը շինուած է։

Ինֆլէքսիպլի ջրոյ տակ եղած ակար մասերն պիտի պաշտպանուին կողերուն վրայ տարածուած երկաթեայ ցանցերով, մինչդեռ արդէն Նորտէնֆելտս, Կադլիս և ուրիշ փոքր թնդանօթք բաւական կը համարուին՝ որ և իցէ թշնամի ծովառումբական նաւակաց բազմութիւնը հեռու պահելու։ Նորտէնֆելտ թնդանօթք զետեղեալ են 'ի խելս նաւին և աշտարակաց վրայ 'ի յարկին, և զմին միայն գործածելու համար երկու մարդ կ'ուզէ։ Մարդիկներէն մէկն շրջելու և ուղղելու համար յատակին ետևը կը կենայ, միւսը կողմնակի լծակով գործելով, արձըկելու համար. մէկ անգամով կրնան կամ մէկ կամ երկու հարուած արձըկել։ Բարձրէն կը լեցուի, ռազմամթերքն 60 փամփուշտով արկղի մը մէջ պատրաստուած ըլլալով։

Նորութիւն մը մասին, նաւուն վերնագոյն կողմէն Whitehead ծովառումբներն արձըկելու դրութեամբ. երկաթիոյ հաստանի մը հաստատուած է պատուարայ, և իրեն երրորդ ոտքէն ծովառումբ մը կախուած է. ոտքը սահմանեալ նշանի մը կը ճօճայ, և մի և նոյն ժամանակ ծովառումբն ինքնաշարժ կերպով կը սահի՝ ուզած խորութեամբ ջրոյն մէջ միջամուխ կ'ըլլայ։

Ինֆլէքսիպլ արդէն իր ծովու փորձերն ըրաւ։ Ելիմութէն մեկնեցաւ 'ի Ճիպլդերրա 25 Հոկտեմբերի 1881ին, կտրելով անցնելով Պիսգայիս խորշը և զարմանալի յաջողութեամբ նաւարկեց. ճօճումներն վայրկենի մը մէջ 10 էին և տատանումն 10 աստիճանի, նոյն ժամանակ ծովն կը հեղեղէր իր աշտարակները։ Երկրորդ առթին 'ի Միջերկրականի, պէտք եղաւ որ շատ աւելի խիստ փորձոյ տակ ինկնի, աւելի արագ և խոր ըլլալով տատանումն, ինչուան մէկ օրուան մէջ եօթնևտասն և ուրիշ օր մը հնգետասան աստիճանի հասնելով։ Այս ճանապարհորդութեան մէջ իր առագաստաւոր զօրութիւնը փորձեցին, և ճանչցան որ բաւական չէր՝ անոնցմով կարենալ կենալու կամ դիւրաւ շարժելու։ Բայց պէտք է գիտել, որ 'ի բնէ Ինֆլէքսիպլ ծրագրողէն առագաստ և կայմ կրելու համար չսահմանուեցաւ։ Վերջին փորձոյն մէջ նորէն նաւուն գընացքն յաջողեցաւ, և թէ որ 'ի բաց առնուի առագաստից զօրութեան պակասութիւնն, տարակուսելու բան չի կրնար ըլլալ իրեն յաջողութեան վրայ։

Իտալիոյ պատերազմական նաւուց նորանշան ճարտարապետութիւնն և մեծութիւնն, ազգաց թէ զարմանաց և թէ խօսից նիւթ եղաւ. բաց 'ի վերոյիշեալ երկու նաւերէն, շինուելու վրայ են նաև Լեբանթոյ և Իտալիա, մեծագոյն քան զառաջինսն, և որք առ հասարակ աշխարհիս նաւական զօրութեան հզօրագոյն նաւքն կը համարուին։

digitised by A.R.A.R.@